



ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱՍԻՔ կը հրատարակուի ի կ. Պոլիս, ամէն ամսոյ 1ին և 15ին:
Հասցէ՝ կ. Պոլիս, Ղալաթիա հորատունիկեան խան:
Ձեռքէ կը ծախուի հատը 40 փարոյ:

Բաժանորդագիրն

Պոլիս, տարեկան

Գաւառները,

Օտար երկիրք,

մէկ մէծիտ:

մէկ քառորդ ոսկի:

վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 1 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ տարի պարզեւարաշխութեան եղանակին ճառ մը արուեսցաւ մեզ Աբե-
-էի մէջ տպագրելու խնդրանք: Աբե-էի
տոլոր չէ հրատարակել այդ օրինակ գրու-
թիւններ, բայց պարտականութիւն մը
կայ — գէթ բարոյական պարտականու-
թիւն — կարգաւ ամէն ձեռագիր որ կը
յանձնուի խմբագրութեան. կատարելով
այդ պարտականութիւն, ճառը ամբող-
ջապէս կարգացի, յետ որոյ փոխանակ
«գուրը նետելու» զայն, պահեցի թղթե-
րու մէջ: Այդ ճառ պատրաստուած էր
մասնաւոր գպրոցի մը պարզեւարաշխութեան
հանդիսին համար նոյն գպրոցի
նախկին աշակերտի մը կողմէ. բայց զբա-
րոցի տնօրինութիւնն արգիլած էր ազոր
ընթերցումն: Ուրեմն այդ ճառ կը յայտ-
նէր ճշմարտութիւններ զորս գաղտնածա-
ծուկ պահել օգտակար կը համարուէր:
Այժմ որ կրթական խնդրին վրայ գրելու
կը ձեռնարկենք, անօգուտ չեմ համարիր
առաջ բերել այդ գրութենէ մի քանի

կտորներ որք պատկեր են «իրական» կոչ-
ուած կեանքի:

«Իոկ դուք, ո՛ր ընթացաւարտք, թո-
ղէ՛ք որ ձեր մի նախկին ընկերն խօսի
նաեւ ձեզ, ձեզ, որ դաժնեպատի ու խըն-
դուն կը թողուք այն յարկն յաւէտ երա-
նեալ. մենք ալ ձեզ նման նոյն յարկի
տակ եմք ծնած, նոյն կրթութիւնն ա-
ռած, նոյն զգացմամբ տողորուած և նոյն
երազներով օրօրուած, ձեզ իմ խօսքս, ձեզ
իմ խրատս: —

«Ձեր ստացած ուսմամբ, այսօր բար-
ձր մթնոլորտներու մէջ կը թռիք դուք
ամենքդ, ամեն ինչ փայլուն, ամեն ինչ
ոսկեղօծ կը տեսնէք. եւ կ'ապրիք խեղ-
աշխարհի մը գաղափարով: Արդեօք քանի՞
քանի՞ անգամներ գպրոցի պատուհաննե-
րէն դիտելով դուրսն, լեռն ու գաշտն,
տներն, զբօսավայրք ու շուկան, ձեր սրբ-
տի խորէն ախեր քաշած էք, «ա՛խ մէյ
մը գպրոցէն ելնէի» գի ձեր անփորձ աչ-
քեր ժպտուն վարդն կը տեսնէին, առանց
իւր փոքրիկ տերեւոց տակ պահուրտած
փշիկն նշմարելու, զի կենաց զուարթու-
թիւնն ամենուրեք տեսնել կը կարծէիք՝
առանց դառնութեանն. պատանին դբա-
րոցական չէնքի սլատերուն մէջ յաճախ
կ'երեւակայէ թէ իւր երանութիւնն պի-
տի գտնէ դուրսն: Այսպէս էինք նաեւ
մեք: Երա՛զ խափուսիկ:

«Ձեզ նման անկասկած, ձեզ նման խնդուն մեկնեցանք եւ մեք, և այն ինչ գպրոցի սեմէն դուրս ելանք, եւ ահա պատրանքը պատեց մեզ: Պատանին որ կը մեկնի վարժարանէն, յաճախ չ'ունի որոշ նպատակ մը և ըստ բաղդի կուգայ նետել ինքզինքն այդ արէծուի ովկէանին մէջ, զոր կենաց ասպարէզ կը կոչենք, եւ կը լինի խաղալիք հովին ու արեաց, նման նաւու մը որ կորուսած է իւր ճամբան և կը չըջի լոկ ի խնդիր մի ու է նաւահանգստի: — Աւա՛ղ այնպիսի օրերու մէջ կ'ապրինք, որ ուսումնաւարտ պատանին ստիպուած է յաճախ պատրիկ իւր յուսոյ մէջ և թափառիլ աստանդական, և գոգցես ազգային դժբաղդութիւն մ'է, որ մեր գպրոցականաց մեծագոյն մասն աւելի ծառայական կեանքի, ամակամաւոր կեանքի է հետամուտ քան արուեստի: Հայ պապն, հայ մօմն, միշտ իւր թուրնկան խրատած է. «Օրթոքի պիլէգիկ մ'ունեցիր ձեռքդ»: Ե՛ր մուցանք, ինչո՞ւ կը մոռնանք այդ թանկագին խրատն եւ գունդ ի գունդ կը դիմենք աստարիղի մը որ գերութիւն մ'է լոկ, լինելով կարի փշոտ ու ապերախտ: Ի՞նչ է վիճակն այսօր այդ պատկարգին: Ա՛հ, պատկերն շատ տխուր է. յաջողութիւն մասնաւորաց կամ բազում որաց լոկ է բաժին. բնդ հանրութիւնն, որ ինքն կը բովանդակէ զժրադարար հայ երիտասարդութեան բնորելագոյն մասն, անստոյգ ապագայի մը կը դիմէ ներկային անուշադիր, ապագային անվտանգ, կ'ապրի օրն օրին՝ մէն մի վայրկեան անգործ մնալու վախով, մէն մի վայրկեան նուազագոյն թողալով մը ապրելու յանձնառուէ մը իւր տեղն յաւիճաւորել ասու երկիւղիւ: Կը հարցնեն յաճախ, ընդէ՞ր հայ երիտասարդութիւնը խտրած է, անպղտ է. ինչո՞ւ անկենդան, ինչո՞ւ մեռած. և ի՞նչ կուզեն որ ընէ այդ երիտասարդութիւնն, որ նմանօրինակ պայմաններու տակ կ'ապրի. գէմքով կը ժպտի, սրտով կ'արտասուէ և օր աւուր վատթարագոյն վիճակի մը կը դիմէ: «Ա՛հ, անկարելի է ինձ գիտելով մեր երիտասարդութեան ներկայն, չարտասանել այս դառն խօսքերն և մանաւանդ ներկայ պահուս, երբ կը տեսնեմ այս աշխոյժ պատանեաց խումբն, որ ընդ փոյթ ասպարէզ մը պիտի գրկէ:

«Դուք սիրելի ընկերք իմ, Ձեր ստացած ընտիր կրթութեամբ մեծամեծ գիւրութիւններ ունիք հետեւելու մասնագիտութեան մը կամ արուեստի: Ուրեմն գիտցէք շահագործել ուսումն որ տուք և ջանացէք աւանդական «պիլէգիկն» ձեր ձեռքն անցնելու: Սիրեցէք ազատ ասպարէզն և խոյս տուէք ծառայական կեանքէ: Յորջափ արուեստ թէ՛ ձեռարուեստ ծաւալի ու ընդարձակի մի ու է ազգի մը մէջ, նոյնքան այդ ազգ բարոյապէս թէ՛ նիւթապէս կը լինի հարուստ ու զօրեղ: Այո՛, սիրենք արուեստը զի արուեստաւոր ժողովուրդ մը երբէք չաղքատանար և չ'լինիր գերի օտարին քսակին: Սիրենք արուեստը, չ'քամահրեմք ձեռարուեստը, թող դա լինի երկաթագործութիւն թէ՛ ատաղձագործութիւն, լաւագոյն է քան ծառայական կեանքն և ունի անհուն ասպարէզ յաւաքդիմելու: Ազատ ասպարէզը քաջերու կուտայ հրաւէր, երկչոտք են որ խոյս կուտան անոր: Օ՛ն, ժամ է արդ ցոյց տալու թէ՛ մենք ալ ունինք արժանիք ու կարողութիւն կարենալ օգտուելու այն բարիքներէն զոր գիտութիւնն ամեն օր կը արուի ի տիրուս աշխարհի: Ինչո՞ւ սա պատանին որ ունի ընդարձակ ծանօթութիւն բնագիտութեան, տարրալուծութեան ու ուսողութեան վրայ, չ'չարժէ մուրճն, զոր իւր հայրն ու պապն շարժած ու շարժած են, և շնորհիւ իւր ծանօթութեանց չ'բարեկարգէ ինչ որ հօրմէն առ որդին աւանդաբար եկած է և օր մը յարատեւ աշխատութեամբ անշուք այդ «տէմիրճի» խանութը չ'փոխանակէ վայելուչ գործարանի մը: Ահա այս դաժափարով օժտեալ նոր սերունդն է որ պիտի կրնայ կասեցնել անկուսն ուր կը դիմենք, և ահա ինչ որ ազգը կ'ակնկալէ իւր վարժ արաններէն:

Այս տողեր երբ իբր լուսանկար կը պատկերացնեն տխրութեան այն տեսարանները որոց հանդիսատեսներն ենք միշտ և համապաղ, մատնանիլ ցոյց կուտան ճանապարհ մը ընդ որ ընթանալ կը հրաւիրեն հայ ուսանողութիւնը, որպէս ճանապարհ որ կը տանի եթէ ոչ Աւետեաց երկիրը գէթ հանգստեան անկիւն մը: Այլ սակայն շատ անգութ ըլլալու ենք պահանջելու համար որ այսպիսի սեւա-

Թոյր ճառ մը կարդացուի մի այնպիսի օր զոր սովոր ենք կոչել «երկուս երանեալ» . մինչ հանդիսական տիկնանց և տեսարց «ազգասէր սրտերը» կը լեցուին «բերկրապատար խնդութեամբ» ի տես ազգին «գեղածիծաղ յոյսերու» և իրենց հոգիներն — միշտ ազգասէր բնականաբար — կը վերամբառնան ի լուր վսեմ՝ ձայնին որ կը բարբառի «յաղագս ճշմարտի՛ն , գեղեցկի՛ն և բարւո՛յն» . ինչու՞ այդ ժպտուն հորիզոնը նսեմացնել Թոյրաթուխ ամպերով : Է՞ր այդ տխուր վաղորդայնի ուրուականովն սարսափահար ընել «անապակ ուրախութեամբ զեղուն սրտերը» :

Կարծեսք թէ այսպէս կը մտածեն ամէն դպրոցի տնօրէններն , հոգաբարձուներն և ազգն ողջոյն :

Եւ սակայն այդ հրճուանքներու կը յաջորդէ տխուր վաղորդայնք . տխմարն նա՛ է , մանաւանդ չարն նա՛ է որ երբեք մտատանջութիւն չունենար այդ տխուր վաղորդայնի , ապահովապէս վերապահուած մեր մանչերու և աղջիկներու երբ դպրոցէ դուրս կ'ելլեն :

Տասնեւինը տարի առաջ օր մը Ազգ . Ժողովի մէջ մի բժիշկ , Տոք . Մանուէլ Իւթիւճեան խնդրեց ժողովականներէ որ պահ մը իրենց ուշադրութեան առարկայ ընեն նաեւ Ազգ . կրթական խնդիրը , ի լուր այդ հրաւերի ամէն երեսփոխաններու գէմքեր սարսափահար երեւոյթ զգեցան , և ժողովողական երեսփոխան մը , կամ լաւ եւս երեսփոխանը , Փափազեան Ստեփան Էփէնտի , իր պաշտօնակից երեսփոխան տեսարց բուռն զայրոյթի թարգման հանդիսանալով գոչեց թէ մինչ այնպիսի կենսական խնդիրներ որպիսիք են Ազգամարայ և Սոյ կաթողիկոսական խնդիրներն Ազգային Ժողովի հոգածութիւնը կը պահանջեն , ելլել կրթական խնդրի վրայ ուշադրութիւն հրաւիրելն անպատեհ էր (ինչու՞ չըսել ազգային դաւաճանութիւն) :

Տոք . Մանուէլ Իւթիւճեան լռեց , — դո՛հ մնալով որ իր «անպատեհ» առաջարկին համար պարսաւանքի քուէ չ'ստացաւ դիւանէն :

Ու տարիներն անցան . հարիւրաւոր հազարաւոր մանչեր ու աղջիկներ եկան ստուարացնել իրենց նախորդ տարաբաղդ սերունդի բանակը :

Մի օր յոյս մը սրբալաց թէ վերջապէս Ազգամարի և Սիսի խնդիրները կըրնան վերջանալ . Իփէքճեան կրթական ծրագիր մը կը յօրինէր : — Ազգային Ժողովը պատրաստուեցաւ նուիրել մաս մը իր հոգածութենէ նաեւ կրթական խնդրին : — Ի՛նչ , երբ Պալատէնեայի խնդիրը կայ , երբ Պատրիարքական խնդիրներ կան , ազգային ոճիր չէ՞ միթէ ելլել խօսիլ այնպիսի խնդրի մը վրայ որ զուրկ է աւագ կարեւորութենէ : Միթէ Պալատէնիական , Կաթողիկոսական , Պատրիարքական խնդիրները չե՞ն բաւեր Ժողովրդի մը բարոյական ու նիւթական երջանկութեանը : Կրթական խնդիրը մէկդի նետուեցաւ :

Ու տարիներն անցան . հարիւրաւոր հազարաւոր մանչեր ու աղջիկներ եկան ստուարացնել իրենց նախորդ տարաբաղդ սերունդի բանակը :

Եւ մեր օրովը , Արուեստանոցի մը խնդիրը ներկայացաւ Ազգ . Ժողովի . Սովեւրոյ Յանձնաժողովէն մնացեալ դրամովը օգտակար եղանակաւ գործի ձեռնարկելու առաջարկ մըն էր : Կրթական խնդրի հոգածութեան սկզբնաւորութիւնն էր : — Ներքի՛ն կանոնագիր , Ներքի՛ն կանոնագիր . բացառանշեց ժողովը : Ի՛նչ , երբ այսպիսի կենսական խնդիր կայ ազգային Ժողովի դիւանին վրայ , ելլե՛լ զբաղիլ երկրորդական հարցերով : Միթէ չ'ունի՞նք կրթական ծախքի գումար , չ'ունի՞նք կըրթական տեսուչ , ուսումնական խորհուրդ :

Ու տարիները պիտի անցնին , եւ հարիւրաւոր , հազարաւոր մանչեր ու աղջիկներ պիտի երթան ստուարացնել իրենց նախորդ տարաբաղդ սերունդի բանակը :

Մի օր ալ Կովկասէն մեզ սպայ մը եկաւ . այդ երիտասարդը սարսափահար մնաց ի տես հոգւով ու մարմնով մաշած պատանեկութեան մը , երիտասարդութեան մը : Մեր աչքերը վարժ այդ տեսարաններու , ոչ ինչ կը նշմարէին ցաւալի . բայց նորեկի մը աչքերը սրտտես են : Պ . Նիկողոսեան աղմուկի աղաղակը բարձրացուց , ամբաստանեց մեր կրթական մեթոտն իր բնող այդ չարիքներու . զինւորի լեզուն բուռն էր մինչեւ իսկ վայրագ . բայց հազիւ թէ կարող եղաւ զմեզ սթափեցնել . սկսանք մտածել . մամուլ ու

հանրային կարծիքը զրադեցան կրթական խնդրով. Պ. Նիկողոսեան մասնաձևից բնաւ արուեստն իբր ռուզիլ ճանապարհ երջանկութեան»։ Յուզումը տիրած էր մաքուր մէջ, ինչպէս եւ անհանգստութիւն. ապա ուրեմն վճռեցինք թէ՛ Երասխի Երասխի Կովկասեան սպայն Երասխի Երասխի Ե. կարօտակէզ էինք մեր թմրութեան, որ զմեզ այնքան հանգիստ ու խաղաղ կը թողուր։

Արեւելի հիմնարկութեան առաջին օրերէն սկսեալ մինչեւ այժմ անդադար փորձով կը տեսնենք մեր կրթական մեթոտներու արտադրած դժբաղդութիւնները։ Երբ հրատարակեցաւ Արեւելի առաջին թիւն, ապա մը կար մէջը որ կը հաղորդէր թէ խմբագրութեան համար պէտք կայ թարգմանչի մը որ գիտնայ բնական հայերէն եւ մէկ կամ երկու օտար լեզու։ Թերթին հրապարակելէն մի քիչ վերջ խմբագրատուն ներկայացան մի քանի աշակերտակա պատանիներ ու երիտաւարներ. յաջորդ օրը, յաջորդ շաբաթները շարունակեց այդ թափօրը. ամէն գալոցէ, հայ թէ օտար, մասնաւոր թէ ազգային, հին ու նոր աշակերտներ եկան. հարկուրաւոր էին. առուար մեծամասնութեան դէմքերը ակներեւ ցոյց կուտային ուշիմութեան, ապնուութեան նշանները, աշխատասիրութեան փափագը. բայց ո՛չ մին կարող եղաւ դիւրաթարգմանելի յօդուած մը հայերէնի վերածել առանց ամենամեծ սխալներու. ոչ ոք կարող էր ամբողջապէս հասկնալ քիչ թէ շատ լաւ գրուած գրութիւն մը։ Կարելի չեղաւ մեզ մէկն ընտրել. սպաւորութիւնը տըխուր եղաւ. այդ խեղճերը արտում ու ցուած ետ կը դառնային։

Վեց տարի է մերթ ընդ մերթ ազգեր կը հրատարակուին Արեւելի մէջ վաճառականի գրագիր մը ուզելու համար։ Ապա կը կրկնուի, ընտրելիները խուռներամ կը ներկայանան. դարձեալ ամէն կարգի գալոցի աշակերտներ, ոմանք տարիէ մը, ոմանք տասը տարիէ ի վեր գալոցը թողած. եւ հարկ է ըսել որ կարելի չէ եղած երբեք մին այդ ընտրելիներէ յարմար դատել գրագրութեան պաշտօնին։ Ու ի՞նչ կը պահանջուի. քիչ մը մաքուր գիր, քիչ մը հաշուակալութիւն եւ թուա-

բանութիւն, քիչ մ'ալ օտար լեզուաւ նամակ գրելու չափ լեզուագիտութիւն։

Եւ ըսե՛լ է թէ մեր բոլոր գալոցներն ուրիշ ծրագիր չունին, ուրիշ նպատակի չեն ծառայեր բայց եթէ թարգման ու գրագիր պատրաստելու։

Խօսի՞նք աղջիկներու վարժարաններու վրայ. ընդհանուր ձգտում կայ աւանդել մեր աղջիկներուն այնպիսի կրթութիւն մը որ նմանի Եւրոպիոյ մէջ դասուհիներու, իշխանուհիներու, լորտուհիներու աւանդուած կրթութեան։ Եւ շնորհիւ այդ կրթութեան կ'ունենանք աղքատ դասին մէջ յաւակնոտ, պահանջող, աղքատութեան դատապարտեալ աղջիկներու սերունդ մը որ կը պատուին առանց կին մայր ըլլալու։

Այդ ամէն չարիքներու հանդէպ դուցէ յանդգնութիւն չը սեպուի յայտարարել թէ մեր թշնամին գալոցն է։ Այս տխուր յայտարարութիւնը պիտի համարուի ճշմարտութիւն եթէ կարելի ըլլար պատրաստել վիճակագիր մը քսան տարիներէ ի վեր մեր Պալի վարժարաններէն անցած աշակերտներուն։ Հոն պարզապէս պիտի տեսնենք թէ այդքա՛ն աշխատութիւն ազգի կողմէ — զի աշխատութիւն կայ, այդ անուրանալի է — այդքա՛ն վատնուած դրամ, ուրիշ բանի չեն ծառայած ու չեն ծառայեր բայց եթէ արտադրել սերունդներ, մեծ մասամբ հաշմանդամ մաքով, մեծ մասամբ տարաբաղդ եղած։

Եւ ո՞չ ապաքէն այդ դժբաղդութիւնը դարմանելու փափաքն էր որ ծնունդ տուաւ Բերայի աղջիկներու Արուեստանոցին։ Ի՞նչու ընդհանուր համակրութիւն կայ Հայոց մէջ այդ Արուեստանոցի համար. վասն զի ամէն ոք համոզուած է թէ այդ հիմնարկութիւնը կոչուած է փորձառական ուղեցոյց մը ըլլալ մեզ եւ մեր մահաբեր ծրագիրներէն զմեզ ազատել, Բայց առ ի՞նչ կը ծառայէ միակ Արուեստանոց մը բիւրաւոր աղջիկներու եւ մանչերու համար։

Եւ չարիքը տարածուած է իբր տարափոխիկ լաւութիւն մը Պոլսէն ի դաւառու ուր մեր գաղափարներու համեմատ կը ջլամբուի լոյսն ուսման եւ գիտութեան։ Գաւառացի երիտասարդներն ալ այդ կըրթական աղէտի ներքեւ կը մահանան։ Դեռ երէկ Արեւելի մէջ սա տողերը կը հրատարակուէր Այնթապէ։

«Քաղաքիս համար ուրախառիթ նորութիւն մ'է նաեւ «Քրիստոնեայ Որբանոցին» ուսանողաց արհեստական արտադրութիւնը: Որբանոցին Հիմնադիր Պ. Յ. Յովհաննէսեանի աշխատութեամբ մի քանի որբեր Լոնտոնի և Պէյրութի մէջ տարբեր արհեստներ ուսան վերադառնալով գոթի սկսան: Սոյն արհեստներն են բժշկութիւն, ատամնաբուժութիւն, կաշեգործութիւն, հացագործութիւն, խոզանակագործութիւն եւ այլն: Տնտեսական անգոհացուցիչ պայմաններու ենթարկեալ ժողովրդի մը մէջ միութարական է տեսնել արհեստական կրթութեան այնօրինակ քայլ մը, որ կրնայ մասամբ առահովել յաւանադարձացաւ:»

Կարինի մէջ Սանատարեան վարժարանը ըստ բուսականին զերծ մնացած է մեր մտլորութենէ. ձեռագործ արուեստներու ճիւղն հոն ի պատուի է և կ'արտադրէ այնպիսի արդիւնքներ որք իրապէս գոհ կը ձգեն ամէնքս ալ:

Չարիքն ակներեւ է, մերկապարանոց և մեծ նորութիւն չէ այդ աղէտի նկատմամբ խօսիլ: Նորութիւն պիտի ըլլայ եթէ սկսինք լրջարար խորհիլ այդ չարիքը դարմանելու մասին, և իրագործենք մեր խորհուրդները:

Որո՞ւ պարտականութիւնն է գոթի գլուխ կանգնիլ տարակոյս չկայ թէ այդ պարտականութիւնը մասնւորին է, և մասնուրի միջոցաւ երբ հասարակաց կարծիքը խտտապահանջ ըլլայ, այն ատեն Ազգ. Ժողովը կ'աթափի եւ կը խորհի թէ ներքին կանոնագրի խնդիրներէն աւելի կենսական հարցեր ունինք:

Ամէն ոք համոզուած է թէ՛ դպրոցը մեր մէջ, ինչպէս նաեւ ամէն ուրեք, ոչ միայն աշակերտներու սիրտն ազնուացընելու, հոգին բարձրացնելու, միտքը մըշակելու կոչուած է, այլ եւ Արուեստանոց է, ուր աշակերտը պիտի սորվի իր ապրուստը ձարելու միջոցները: Շատ տկներեւ է որ դպրոցական ծրագիրներն օգտակար ընծայելու համար հարկ է որ այդ ծրագիր երկրին տնտեսական պահանջումներուն համապատասխանէ: Խնդրանք եւ Մատուցումի ճշմարտութիւնն այս տեղ եւս պէտք է օրէնք ըլլայ: Խելացի եւ խոհական իմաստասիրութիւն մը երկրին տնտեսական պայմաններուն, հաւտնական եթէ ոչ կատարելապէս ստոյգ՝ ենթադրութիւններ տնտեսական ապագայ զարգացումի, կալ ող են փրկաւէտ արդիւնքներ առաջ բերել: Ի՞նչ ըսել երբ երկիր մը արուեստանոցներ ունենայ որոց մէջ միայն

և միմիայն մէկ արուեստ, օրինակ ոսկերչութիւն, կամ ժամագործութիւն աւանդուի տարակոյս չկայ թէ բոլոր ոսկերիչները, բոլոր ժամագործներն առանց բացառութեան սոված կը մնան: Ճիշդ նոյնն է մեր մէջ, իբր ապրելու արուեստ միայն ֆրանսերէն կ'աւանդենք. այժմ՝ բիւրաւոր են մեր մէջ ֆրանսագէտներն, մինչ երկիրն ուրիշ պահանջներ ունի:

Մեր ծրագիրները պատրաստուած են այնպիսի աշակերտներու համար որք իրենց դպրոցական ընթացքը կրնան շարունակել մինչեւ տասնևութ քսան տարեկան, և յետ այնորիկ մասնագիտական վարժարան մը մտնել, մինչ մեր տղաքներն ստուար մեծամասնութեամբ երբ տասնևհինգ տասնևվեց տարին կը մտնեն իրենց՝ շատ անգամ և իրենց ծնողքի, ապրուստը ձարելու հարկին մէջ են: Մեր աղջիկները իրենց ասեղովը սարելու և կարգուելու պարտական են:

Ամիսիկելով կ'ըսենք. Ազգ. Ժողովի պարտականութիւններու մեծագոյնը և ոտիպողականը կրթական խնդիրն է. և պէտք է պահանջել այդ ժողովէն որ այժմ այնքան խոհական և տնկեղծապէս ազդասէր տարերքներէ բաղկացած է, պահ մը մոռանալ այն խնդիրներն որք պարզապէս ժամափաճառութեան կը ծառայեն, ու կրթական չարիքը դարմանել խորհիլ:

Երբ արգի երեսփոխաններու մեծամասնութիւնը սկսաւ միջամտել ազգային գործերու, շատ խստութեամբ դատեց իր նախորդներն: Ի՞նչ ըրած էք մէկ քառորդ դարու մէջ, ըսուեցաւ: Եւ այդ խիստ հաշուապահանջութիւնն է պատճառ որ նախորդ սերունդի ներկայացուցիչներն այլ եւս անգոր են և տկարացած:

Այլ սակայն միթէ նոր մեծամասնութիւնն ալ առանց զգալու չընթանար այն արահետէն որ գծուած է միտնգամ: Տարակոյս չկայ թէ մի քանի տարի վերջ աւելի խիստ յանդիմանութիւններու մենք պիտի արժանանանք. մենք ալ պիտի դատապարտուինք:

Եւ մինչ նախորդք դատապարտուին, մենք դատապարտուինք, ու պատճառ մը չկայ որ մեր յաջորդներն ալ մեզ հետեւելով չդատապարտուին այս ամէն դատապարտութիւնները սակայն իր կեանքով տուածով մը կայ:

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ 'ՐԷՍԴ,Ը

Ամեն ինչ որ կ'ընենք՝ Տիրաջը
փառքին համար է :

Գրացե՞ր էք Ղալաթիոյ Րէսդը :

Ղալաթիոյ ամէնէն աննշան ու միանգամայն ամէնէն հետաքրքրաշարժ վայրերէն մին է այս : Զբօսարան մըն է կերպիւ իւրիւր, և միւս զբօսարաններուն հետ ունեցած նմանութիւնն այն է ևեթ որ հո'ն ալ անգործ ու պարտաւ մարդիկ կը յաճախեն : Բայց մինչդեռ այլուր պիտի գտնէք միայն դէմքեր յորս մտլութիւնը դրած է իր ակներեւ գրողին և օղին ու ալքովը փորած են բարակ ակօսներ, ու աչքերու մէջ անյագ տենչանայ ու ահուելի յուսահատութեան խօլ փողփողումները, վայելչազգեստ մարմիններու քով ծակած արմուկներ և տաբատներու ծըլիկ ծըլիկ քղանցքներ, ու անխութութիւնն ու անպատկառութիւնը քով քովի, — ասդին, Րէսդի մէջ, ամէնքը մէկ կաղապարէ թափուած մարդիկ են, հանդարտ դէմքեր, խնամով խոզանակուած հագուստներ, խորհրդակիր զգուշաւ սրութիւն մը, և աչքերու մէջ միշտ յուսոյ ցոլքն :

Անգլիացի միսիոնարուհի մը հաստատած է այս չէնքն ի Բէրլէմպէ-Բազար, իբր բողոքականութեան ծառայման միջոցներէ մին : Շէնքն երկու սենեակի կը բաժնուի, սրճարան և ընթերցատուն : Մուտքն և ընթերցանութիւնը ձրի են, ու պարտաւոր չես բան մը առնլու : Սահուէ, թէյ, կաթ և նմանօրինակ անվնաս ըմպելի մը կը բերէ քեզ սպասաւորն՝ եթէ ուզես, թէ ոչ կարող ես առաւօտէն մինչեւ իրիկուն նստիլ անդ առանց փարս մը վճարելու : Պատերուն վրայ գրուած են Ս. Գրքէն այլ և այլ հատուածներ, հայերէն, յունարէն, անգլիերէն, թուրքերէն : Ամբողջ մանուկապարան մը կայ հոն կրօնական հանդէսներու՝ որք առանձին հատորով կազմուած են, և բաւական ստուար կոյտ մը կրօնական տետրակներու զորս տեղւոյն սպասու սրը քաղաքավարութեամբ կը նուիրէ ձեզ : Եւ խոտենական վերնագիրներն են աղոնք, որք իրենց պարզութեանը մէջ չես գիտեր ինչպէս կը մատնեն բողոքականութիւնը : Զգալ և Յիսուսի երկու — Յիսուսի նայնէ. — Ամեն Քրիստոնէայ

Քրիստոնէի բողոքար. — Յանցանքն իմ չէ. — Ոյ՜ էն որ կ'ընենք զհոգին Սարգ. և այլն : Ժուժկալութեան ընկերութեան մը մասնաճիւղն է նաև Րէսդը. ընթերցատան մէջ, եռոստանոյ մը վրայ որ ծանրաբեռնեալ է լրագիրներով և տետրակներով, կայ այն քարտերէ մին զոր ստորագրողն ինքզինք պարտաւոր կը համարի հրաժարելու ողելից ըմպելիէ և ծխախոտէ, ու լամբակէն անցունելու կապոյտ ժապաւէնի կտոր մը : Այդ քարտին ճակատը գրուած է Ամեն Բան Կրնա՞ ընէլ Քրիստոնէի որ չէ՞ կը շօշաշաշէ (Փէլիպ Դ. 13), և «Ժուժկալութիւն կամ Քրիստոնէական շարժում մոլութեանց դէմ» վերնագրին ներքեւ աս բառերը. «Յիսուսի օգնութեամբ ողելից ըմպելիներէ և ծխելէ հրաժարելով՝ կուխտեմ՝ այլ եւս չ'գործածել և օրինակ ըլլալ այլոց», որոց ներքեւ պէտք է գնել ստորագրութիւնը : Մինչեւ հիմա Րէսդի հայ սպասաւորը միայն կարծեմ քաջութիւն ունեցած է իր անունը փայլեցնելու այդ քարտին ներքեւ և իր լամբակը զարդարելու այն յուսած ծաղ ժապաւէնով :

Բողոքական տաճարի մը պարզութիւնն եւ մաքրութիւնը կը տիրեն անդ : Սպասարկութիւնը կը լինի երկիւղած հանդարտութեամբ ու վայելուչ բարեկրթութեամբ. սրճարանին երկու ծառայները կարծես սրբավայրի մը մէջ կը քալեն : Ու սովորութիւններ կան հոն որք անվարժներուն զարմանքն ու մերթ զայրոյթը կը շարժեն : Ընթերցանութեան յատկացեալ սրահին մէջ արգիլեալ է գլանիկ մը ծըլտել, կամ սուրճդ հոն բերել տալ, — մինչ Րէսդի երկու կողմը, քիչ մը վեր կամ վար, կտակածելի գարեջրատանց խառնակեցիկ աղջիկներ, — միտ'ւրն բնկերային տալիսնութեան. — անցորդ ին առջեւ կը պարզեն իրենց յօսնական նայածքները, խենչ ծիծաղներն և լսիրչ կեցուածքը :

Հայեր եւ Յոյներ միայն կը յաճախեն Րէսդը. աւելի շատ Լուսաւորչական և Օրթոտոքս քան Բողոքական : Վարժարանի նոր ելած երիտասարդներ են ասոնք մեծ մասամբ, անգործ դասաւանդներ, գործ միտուող զրադիկներ, պաշտօնի հետամուտ բողոքական քարոզիչներ : Հոն կը նստին ժամերով, լրագրի մը առջեւ, պատուհանին մօտ, միշտ յուսալից և ակնկա-

լու, ուշադիր դրան իւրաքանչիւր բաց-
աւածքին եւ ներս մտնող մարդուն, որ
գողցես իրեն հետ պիտի բերէ այնքան ա-
տենէ ի վեր ըզձայնալ գասերը կամ պաշ-
տօնը: Ու մերթ, քիչ մը չարժու՞մ դնելու
համար կարծես այդ խաղաղիկ միօրինա-
կութեան մէջ, կրօնական վիճարանութիւն-
ներ կը լինին, յորս Յոյները գերազանց են
միշտ իրենց չարժուածքով ու ձայներու
բարձրութեամբ: Եղած չէ սակայն վիճա-
րանութիւն մը որ կախով վերջանայ. այդ
միջնորդական մէջ չես գիտեր ի՞նչ կայ իւ-
ղոս եւ թմրեցուցիչ, որ կ'ազդէ ամէնէն
աշխարհ մտքմտոյ ու ամէնէն կը հոտ ու-
ղեղներուն վրայ:

Ընթերցարանին մէջ, տախտակորմով
բաժնուած մաս մը կայ որ Բեֆի տես-
չուհւոյն եւ նորա օգնականին յատկաց-
եալ է: «Աւետարանական» միսիոնա-
րու հիներ են աղոնք: Իրենց մանկական
ու միանգամայն վաղնջուց մազազաթի պէս
ձմրթկած դէմքը պատկասանք ու կարեկ-
ցութիւն կ'ազդէ քեզ: Այդ կապոյտ ա-
շուրներուն խորը կեանքի ի՞նչ աղետարչ
տուամ մը կը յայտնուի դիտողին: Կ'զգաս
թէ հոգին ո՞ր աստիճան տիրապետած ըլ-
լալու է մարմնոյն, — արդի ժամանակիս
մէջ ուր երազներէ աւելի գործը, ան-
դորրաւէտ խաղաղութենէն աւելի մարմ-
նատանջիկ կրքերն ու խանտանքն, վա-
յելքէն աւելի հեշտախտութիւնը, սէրէն
աւելի մի՛սը կը տիրապետեն յաղթա-
պանք, — որպէսզի այդ հէգ անգլիոցի
աղջիկները կեանքին ամէն հաճոյքներն
արհամարհելով, օտար երկիրներու մէջ
զան օտար եւ անտարբեր մարդոց նուի-
րել իրենց ամուլ ծոցին բոլոր խանդաղա-
տանքը:

Երբեմն կ'երթայի ժամերով նստիլ այդ
հանգստավայրը. Ղալաթիոյ անտանելի
ժխորին ու եռացող ոգեւորութեան մէջ,
անչարժ արձանի մը տալաւորութիւնը կ'ընէ
քեզ այդ տունն, ուր գլուխները՝ մարմարե-
այ սեղաններուն վրայ հակած լռելեայն՝
կը կարդան Աբե-էլ, Աւ-հաթէր, Բե-հաթէր եւ
անգլիերէն թերթեր: Ընթերցարանին մէջ
ալ մէկ երկու հոգի կը գրեն մատենագե-
րանին առջեւ: Յոգնած ուղեղներու հա-
մար յարմարագոյն տեղն է այդ ի Ղալա-
թիա: Հիմակ ա՛լ առջի անտո՞քը չ'ունիմ

այդ վայրին համար: Օր մը սարսուռով
դուրս ելած եմ անտի:

Անցեալ նոյեմբերին տեղի ունեցաւ
այս: Հինգշաբթի օր մըն էր, լաւ կը յի-
շեմ: Տրտում օդ մը կար. առջի իրիկուընէ
ի վեր անձրեւ տեղացած էր եւ Ղալաթիոյ
սալայատակներուն ազոտու կապարագոյն
ցեխը աչքի զարնող հակապատկեր մը կը
կազմէր երկնից պայծառ կապոյտին հետ,
որ, թօնընկէց ամպերէն ազատած, ան-
հունութեան մէջ կը պարզէր իր անծայ-
րած իր մերկութիւնը: Կծու ցուրտ մը կը
տիրէր, ու քամին բիւր սլաքներով կ'առ-
ջնակէր մարմնոյն հոլանի մասերը: Բեֆը
մտայ յանկարծ, չեմ գիտեր ինչո՞ւ: Մար-
մարեայ սեղանի մը առջեւ անցայ, ուր
նստած էր բարեկամներէս մին, մշտնջենա-
ւոր յաճախող այդ ներողամիտ հաստա-
տութեան, եւ պատկերազարդ հաւաքածոյ
մը առնելով սկսայ մեքենաբար թղթատել:
Նոյն բաղմութիւնն հոն էր միշտ, անդոյր
ու անշուկ, մեղմածայն խօսակցութեամբ
զբաղած կամ ընթերցանութեան մէջ խո-
րատոյ:

Այդ միջոցին ճիշդ քովս եկաւ նստաւ
տաննէինեքսան տարեկան երիտասարդ
մը, Ֆրանսերէն լեզուաւ բարեկեց դիմացի
բարեկամս, անգլիերէն թերթ մը քաշեց
առջին, փորձեց կարդալ, եւ երկու վայր-
կեան յետոյ, արհամարհանօք մէկդի նե-
տեց զայն եւ սկսաւ ձեզուներ դիտել:

Ուշագրաւ դէմք մըն էր, բոլորովին
տարբեր այն խաղաղ ու տարտամ դէմքե-
րէն որոց վարժուած էր հոն նայուածքս:
Մոլորուն եւ խոր աշուրներ ունէր, բայց
խո՛ր, այնչափ խոր զի բերուն ցոլքն
այնպէս կը վառէր հոն ինչպէս գլանիկի
մը ծայրը գիշերուան խաւարին մէջ: Այ-
տերն ա՛յնչափ ներս քաշուած էին, ու
փոխ ա՛յնքանի, որ բերնին մէջէն գիրար
կը համբուրէին անշուշտ: Պեխ ու մօրուք
չ'ունէր դեռ. ցից կզակին վրայ հաղիւ
կ'երկարէին քանի մը սեւ թեւեր որոց հետ
կը խաղար իր սուր եւ սոկրուտ մտանե-
րով: Նիհար պարանոցը կը խրէր ուսերուն
մէջուեղ, որք երկու կողմէն վեր կը բարձ-
րանային պատուարներու նման: Գլուխը
դրած էր եւրոպական կլոր գլխարկ մը
տեղ տեղ ձմրթկած եւ ա՛յնչափ ազոտու որ
տարակոյս կ'ունենայիր սկզբնական գոյնին

վրայ : Բարակ վերարկու մը հալած էր որ հազիւ մինչեւ մէջքը կ'իջնէր , և արմուկին ծայրերէն միտը կ'երեւէր տօգոյն ու ուղորմ , ուռուցիկ կապոյտ երակներու սկզբնաւորութեամբ մը : Օձիք ու փողպատ չ'ունէր , եւ աղտոտ շապկի մը բացուածքէն կ'երեւէին լանջոսկրներուն երկու խոռոչները :

Ընթերցումն թողուցի ու այդ դէմքը գիտեցի : Այն հեղիկ մարդոց մէջ հայհոյանք մըն էր այդ երիտասարդը : Իր վիճակն սքողելու երեւոյթ չ'ունէր բնաւ , միւսներուն պէս որք իրենց վերարկուն մինչեւ օձիքը կոճկած են միշտ ծածկելու համար փողպատին պակասութիւնը կամ շապկին քակուքները : Աչուրներուն մէջ ո՛չ յոյս կը կարգացուէր , ո՛չ յուսահատութիւն . անտարբերութիւն միայն : Թշուառութեան վարժուած ըլլալու էր նա , և ագոր մէջ կ'ապրէր սիրայօժար : Քոթանակ մը չ'էր թուեր այդ վիճակն իրեն համար , այլ պատմութեան մը :

Կ'երեւէր որ անգլիերէն ու ֆրանսերէն գիտէր , և սակայն անգործ ըլլալու էր՝ այդ խղճալի կացութեան մէջ գտնուելու համար : Ու , բնազդաբար , ուզեցի գիտնալ իր պատմութիւնը : Բնութենէն ու ընկերութենէն անժառանգ այդ պատեանին ներքեւ ի՞նչ գաղտնիք կար ծածկուած :

Բարեկամիս հետ խօսակցութեան սկըսած էի իր կարգացած մէկ յօդուածին վրայ որուն նիւթը կը պատմէր ինձ , երբ երիտասարդն ալ խօսքի խառնուեցաւ , այն վստահալից համարձակութեամբ զոր կուտայ սրճարաններու , գարեջրատանց , վաղնիներու և չոգենաւներու խառն կեանքը : Մտքուր հայերէն կը խօսէր , և կ'երեւէր որ քիչ շատ խնամեալ կրթութիւն մը առած է :

Բարեկամս վերստին իր ընթերցանութեան մէջ խորատուգումը էր , և խօսակցութիւնը վերջ գտած՝ հակառակ կամացս , երբ երիտասարդն , որ երկու երեք վայրկեանէ ի վեր աչիւրը սեղանին մարմարին յառած էր անքթիթ սեւեռմամբ ,

— Ներեցէք , բաւ յանկարծ , և առնելով ծխախոտի տուփս որ սեղանին վրայ կը գտնուէր , գլանիկ մը բոլորեց կոյծակի արագութեամբ , վառեց , և դէմքը պահ

մը կորսուեցաւ ծուխի յորդառատ յորձանքներու մէջ : Ամէնէն մոլեւանդ ծրխողներու քով իսկ չէի տեսած այն անյագ ցանկութիւնն որով ներս կը քաշէր մոխին ու յետոյ դուրս կուտար քթէն , բերնէն , աչօքն հետեւելով կապտորակ պարօյրներուն անձառ երանութեամբ : Մոխիրն հեռո՞ղեմէ կ'իյնար կուրծքին վրայ , շապկին բացուածքէն ներս , ու կը սահէր նորածիլ թեւերուն վրայէն : Ու գլանիկը ծխեց մինչեւ ծայրը , մատներն ու շրթունքն այրելու աստիճան , եւ երբ վերջապէս հարկադրեցաւ նետել , ըզձական նայուածք մը ունեցաւ աչուրներուն խորը :

— Գաղլիերէն ու անգլիերէնէն զատ ուրիշ լեզու ալ գիտէ՞ք , հարցուցի խօսք մը ըրած ըլլալու համար :

— Այո , բաւ կերկրեալ ծայնով մը որ գոգցես կը քեղրթէր կոկորդին ծայնակն լարերը , գերմաներէն ալ գիտեմ , քիչ մըն ալ տաճկերէն :

Նորէն նայեցայ իրեն . անհանգիստ կ'երեւէր , կ'երերար , կը շարժէր , գլուխն այս ու այն կողմ կը դարձնէր , ու մերթ նայուածքը կը յառէր ծխախոտի տուփին : Հասկցայ :

— Սիկատէթ մըն ալ կը շինէ՞ք , ըսի : Պատասխան չը տուաւ , արդէն իր երկար մատները կը խաղալին ծխախոտի թեւերուն մէջ , և յաջորդ վայրկեանին իր գլուխն ինչն ծուխը պահ մը դարձեալ կը ծածկէր տեսութենէս իր դէմքը :

— Կ'երեւայ թէ շատ կ'ախորժիք ծրխել , ըսի , առիթ մը ունենալու համար իրեն հետ խօսակցելու :

— Այո , բաւ , կեանքիս էն մեծ հաճոյքներէն մէկն է . թո՛ղ որ թիւթիւնը ուրիշ ալ կութիւն ալ ունի , անօթութիւնը կ'անցունէ :

— Դեռ ճաշած չ'է՞ք , ըսի անգիտակցաբար :

— Ձէ՛ , երէկ իրիկուընէ ի վեր բերանս բռն մը դրած չ'եմ , պատասխանեց անփութօրէն :

Այս անգամ չեշտակի նայեցայ իր աչուրներուն մէջ : Ձէ՛ , կատակ չ'էր ընել իր թալկահար և գալարատանջ գիմադրձերն ապացոյց էին ըսածին :

— Անուանիդ շնորհ կ'ընէ՞ք , ըսի :

— Արմենակ Սիմանեան, ըսաւ :

Սիմանեան անունը խմացեր էի, բողոքական հասարակութեան մեծահարուստ և ազդեցիկ անդամներէն միոյն անունն էր :

— Ազգականութիւն ունի՞ք Սիմանեան Յակոբ Էֆէնտիին հետ :

— Հօրեղբայրս է :

Զարմանքէ զարմանք կը գլորէի : Չորս լեզու գիտէր, երիտասարդ էր, այնչափ հարուստ ազգական մը ունէր, եւ քսա՛ն ժամէ ի վեր բան մը չէր կերած : Ա՛լ անխորհուրդ եղայ :

— Ի՞նչպէս կ'ըլլայ ուրեմն... որ այս վիճակին մէջ կը գտնուիք :

— Է՛հ, ձգեցէ՛ք, չ'արժեր պատմել, կարեւորութիւն չ'ունի :

Նորէն գլանիկ մը շինեց, և սկսաւ մեծ ճարտարութեամբ բերնովը օդին մէջ ղըրկել ծուխի բոլորակներ, որք նախ թանձր ու խիտ, երթալով կ'անօտրանային, մինչեւ որ ծիրը կը քայքայուէր եւ աներեւոյթ կ'ըլլար :

Երբ գլանիկն սպառեց, ինձ դարձաւ, և, ժպիտով մը որ գերեզմանի մը եղբւր բուսած ծաղկի մը տալանորութիւնն ազդեց ինձ,

— Հը՛, ըսաւ, կը տեսնեմ որ հետաքրքիր էք կեանքս գիտնալու : Կեցիք պատմեմ քանի մը խօսքով : Նախ եւ առաջ առ ըսեմ ձեզի որ ես բողոքական չ'եմ, չէ՛, բողոքական չ'եմ : Թէ որ բողոքական ըլլայի, ինծի այս վիճակին մէջ չէիք տեսնար, բայց չ'ուզեցի, կամ չ'ըրացայ, ձեռքս չէր : Ամէն ատեն ալ առ վիճակին մէջ գտնուած չ'եմ : Ես ալ աղէկ օրեր ունեցած եմ, մաքուր հաղուած եմ, եւ խմած թիւթիւնս ուրիշէն մուրալու պէտք ունեցած չ'եմ : Չէ՛ մի ըսէք, տեսա՛կ մը մուրալ ալ առ է : Հիմակ ալ եթէ ուզեմ կրնամ տեսիլ մը կոթ ըլլալ : Բայց անա՛նկ զըռած եմ կեանքէն, անա՛նկ զըռուած, որ բողոքովին թող տուած եմ ինքզինքս : Դիչ մը առաջ երբոր հօրեղբօրս անունը տուի, զարմացար հարկաւ որ անանկ հարուստ ազգական մը ունենալովս մէկտեղ առ վիճակիս հասեր եմ : Ես գիտցիր որ իմ գթադրութեանս է՛ն մեծ պատճառն ինքն է : Հիմակ կը հասկնաս :

« Լուսահոգի հայրս ալ բողոքական չէր : Երբոր հօրեղբայրս բողոքականու-

թիւնը ընդունած էր, հայրս որ իր կրօնքին վրայ շատ հաստատ էր, եղբորմէն բաժնուած էր, ու անկից ի վեր քէնով էին իրարու հետ, բնաւ չէին տեսնուեր : Հօրեղբայրս բազմին բերմունքովը առաջ գացած էր, խոշոր վաճառատուներ հաստատած : Հայրս առջի խանութպանը մընացած էր, հինգ վաստկելով, հարիւր ժառք տալով Աստուծոյ : Գործը այնչափ աղէկ չէր, նեղ օրեր կ'ունենար, բայց սկսեան կը սղմէր ու եղբօրը չէր դիմեր : Ինծի ալ այսպէս մեծցուց : « Պապերուդ լուս հաւատքին վրայ խափ կեցիր, Եղա՛ժ » կ'ըսէր երկու խօսքին մէկը : Մեռած ատենը, միտքէս չ'ըլլար բնաւ, տասուերտարու էի ան ատեն, անկողին քովը կանչեց ինծի և շատ մը խրատներ տալէն ետքը վերջին խօսքը առ եղաւ : « Նայէ՛, Արմենակ, զաւակս, ես կը մեռնիմ կ'երթամ կոր, աշխարհքիս վրայ մինակ էս, աճա՛ռ հեղե՛ն քովը պիտի առնէ քեզի, պիտի լուղէ, խա՛րք ընէ, ֆա՛ռ չ'ուրանա՛ս հաւատքդ, հարըդ քեզի օրինակ, չէ նէ էրկու ձեռքս ետա՛ռ ըլլայ : »

« Հօրմէս բան մը չը մնաց ինծի : Ա՛ս մեռելի ծախք է, ա՛ս պարտք է, ա՛ս չեմ գիտեր ինչ է, լինցաւ զնաց : Տասուերկու տարու էի, աշխարհքս ի՛նչ էր չէի գիտեր, մայրս արդէն մեռած, չ'ըսի կարծեմ : Նոյն իրիկունը հօրեղբօրս կողմէն մարդ մը եկաւ առաւ զիս և իրենց ատունը տարու : Չը մոռնամ ըսել որ հօրեղբայրս հօրս մեռելին եկած չէր : Դրացիներէն պատուական մարդ մը կարգադրած էր ամէն բան :

« Մինչեւ այն ատեն չէի տեսած հօրեղբայրս : Դիւարկաւոր, երկու քովէն մօրուօք, անգղիացիի դէմքով ցուրտ մարդ մըն էր : Դիմացը նստեցուց ինծի, քիչ մը ատեն պտըտեցաւ սենեակին մէջ և ըսաւ որ պէտք էր հետեւեալ օրուան համար պատրաստուէի Բոսլէրդ Գոլէճը մտնալու, գիշերօթիկ :

« Չորս տարի կեցայ հոն : Կեանքիս էն անուշ, էն խաղաղ ժամանակը ան ատեն եղած է : Դասերուս մէջ առաջիններէն չէի ալ նէ, վերջիններէն չէի : Կ'աշխատէի, դասատուներս եւ ընկերներս կը սիրէին զիս, հոն սորված եմ ինչ որ գիտեմ : Ամսագլխուն հօրեղբօրս ատունը կ'երթայի :

Շատ չէի համակրեր իրեն, բայց չէի ալ
ատեր: Միշտ առջի ցուրտ վարմունքը կը
բռնէր ինծի նկատմամբ, յառաջդիմու-
թեանս համար գոհունակութիւն կը յայտ-
նէր և կը յորդորէր ա'լ աւելի աշխատիլ:
Այո՛, շատ հանգիստ էի այդ տանը մէջ,
և սակայն երբ պէտք կ'ըլլար տուն եր-
թալ, սիրտս կը սեղմուէր: Գլխաւոր
պատճառը այն կիրակի օրերու աղօթքնե-
րն էին որք կ'երգուէին հօրեղբօրս տանը
մէջ: Հօրեղբօրս մեծ աղջիկը բիանային
առջեւ կ'անցնէր, ամէնուն ձեռքը մէյմէկ
երգարան կուտային, ու մեծ ու պզտիկ,
դուրսէն ալ հրաւիրուած մէկ քանի բոլո-
քական ընտանիքներ ալ ի միասին կ'սկը-
նէին երգել ժամերով: Գիրք մըն ալ իմ
ձեռքս կուտային, երգուած կտորին տե-
ղը կը ցուցնէին և կ'ստիպէին որ միա-
սին երգեմ: Եւ սակայն օ՛ր մը, հաւատա՛,
օ՛ր մը ընկերացած չ'եմ իրենց երգերուն,
հակառակ հօրեղբօրս վրայ ունեցած պատ-
կառանքիս: Լեզուս բերնիս փակած էր
կարծես. քիչ քիչ գիրքը վար կ'առնէի,
մէկդի կը դնէի, եւ երեսս անդին կը
դարձունէի:

«Տասնըվեց տարու եղայ այսպէս. թէ և
բաղդատարար պզտիկ էի, սակայն վիճա-
կիս գիտակցութիւնը ունէի. դժբաղդու-
թիւնը կատարեալ կ'ընէ մարդս: Ամսա-
գլխու մըն էր, դարձեալ տուն եկած էի:
Կիրակի առտուն, հօրեղբայրս իր սենեա-
կը կանչեց ինծի. իր դէմքին վրայ այնչափ
ծանրութիւն ու խտուածութիւն տեսած չէի
երբեք, մինչեւ իսկ ամէնէն ջերմեռանդ
աղօթքներուն ատեն: «Արմենակ, ըսաւ
յանկարծ խիստ և շուտ ձայնով, տարիքդ
ա'լ եկաւ լեցաւ, հիմակ չարիքը բարիքէն
կրնաս որոշել: Մինչեւ հիմա ձայն հանած
չ'ի, որովհետեւ կ'ուզէի որ նախ լաւ մը
վարժուիս՝ ապա ընդունիս մեր կրօնքը:
Կը հասկնաս անշուշտ ըսածներս. վայե-
լուչ է որ դուն ալ քրիստոնեայ ըլլաս:
Այսօր կամ վաղը անունդ արձանագրել
կուտամ մեր ազգապետարանը և փնայեալ
գործողութիւններն ալ մէկ քանի օրէն կը
կատարենք:»

«— Ես ատանկ բան չեմ կրնար ընել,
պատասխանեցի հանդարտ բայց հաստատ
ձայնով:

«Կարծեցի որ վրաս պիտի վազէր:
Դէմքին ոչ մէկ գոյնը փոխուեցաւ, տաք
վայրկեանի մը չափ կեցաւ մտածեց, յե-
տոյ ըսաւ.

«— Դուն վաղը նորէն Գոլէճ գնայ,
եկող ամառգլխուն կը կարգադրենք, բայց
գիտցած ըլլաս որ այս բանը պիտի ըլլայ:

«Ան ամիսը, հաւատա՛, սուտ չը զուր-
ցեմ տասնը՜նգ անգամ երազիս մէջ տե-
սայ հայրս: Ես բողբոքակա՛ն ըլլայի, չէ՛,
կարելի բան չէր այդ: Յաջորդ ամառգլու-
խուն երբ տուն դարձայ, հօրեղբայրս նո-
րէն իր սենեակը տարաւ ինծի եւ այս
անգամ անուշ ձայնով մը:

«— Էհ, Արմենակ, հարկաւ մտածե-
ցիր, ըսաւ: Կը նայիմ որ դեռ աղայ ես.
աշխարհքիս վրայ յամառութենէն օգուտ
մը չիկայ. ես քու ապագայիդ վրայ աղէկ
խորհուրդներ ունիմ. Տիրոջը շնորհիւ չը-
նորհքով մարդ մը կ'ըլլաս: Փեզի եւրոպա
կը զրկեմ իմ առեւտրական գործերուս հա-
մար:

«Եւ կրնակս ծեծելով,

«— Երբ երթանք ազգապետարան:

«— Ներեցէք, հօրեղբայր, պատասխա-
նեցի, արդէն ըսի ձեզի: Ես հաւատքս
չեմ կրնար փոխել:

«Այս անգամ դեփ դեղին կտրեցաւ, կ'ե-
րեւայ որ նայուածքէս ու շարժումքէս
հասկցաւ թէ չպիտի կրնար յալթել ինծի,
թեւէս քաջեց և դռնէն դուրս հրելով՝

«— Անանկ է նէ սա տունս գործ չ'ու-
նիս, պոռաց: Կորսուէ՛, մէյ մըն ալ ե-
րեսդ չը տեսնամ: Նայինք ան քու սիրած
մարդիկդ ի՞նչպէս պիտի պահեն քեզի:
Հայրդ ալ քեզի պէս էր, բայց վերջը անօ-
թութենէն սատկեցաւ:

«Ինքզինքս զսպեցի՝ հօրս յիշատակին
դէմ եղած այս նախապինքին վրէժը չը
լուծեւիւ համար, սանդուղներէն վար վա-
զեցի խենդի պէս, հազիւ խելք ըրի գըլ-
խարկս առնելու փողցին դրանը քովն եւ
դուրս նետուեցայ:»

Երիտասարդն ընդհատեց պատմութիւ-
նըն, գլուխը աջ ձեռքին մէջ առաւ, բու-
թամատովն ու միջամատովը սեղմելով քը-
ներց երակները: Շատ դառն յիշատակներ
արթնցած էին անշուշտ մտքին մէջ:
Ձինքն ուրիշ բանով զբաղեցնելու համար,
գլանիկ մը շինեցի և ծխախոտին տուփն ի-
րեն առջեւ քշեցի:

— Չէ՛, ըսաւ, հերիք է, ա'լ չեմ ծը-
խեր, սիրտս կը ձմիկ կոր: Գլուխ ցաւ-
ցուցի, շուտով մը պատմեմ լմնցնեմ:

Պահ մը ամբիօնեց մտածումները, եւ շարունակեց, այս անգամ արագ ու հասցեիկ կերպիւ, ձեռքը միշտ գլխուն մօտ տանելով ու առաջ նետելով, գոգցես իբր վանելու համար գէշ երազի մը տպաւորութիւնը:

— Ան օրէն մինչեւ հիմակ ան տունը ոտք կոխած չեմ: Դուրս ելլալէս ետքը չեմ գիտեր ո՛ւր գացի, երկու երեք ժամ պտտեցայ ասդին անդին: Գրպանս նախեցայ, երկու մէճիտիէի չափ ստակ կար: Ո՛ւր պիտի երթայի, ի՞նչ պիտի ընէի: Մտածեցի որ մօրս մէկ հեռաւոր ազգականը կար, չոգենաւով վար իջայ, և գիշերն անոնց տունը գացի: Արմացած զարմացած մնացին երբ ըսի որ ա՛լ հօրեղբօրս տունը չպիտի դառնայի, բայց պատճառը չզուրցեցի: Ըրածս չը պիտի հասկնային, ինչո՞ւ մարդիկ էին, պիտի մեղադրէին զիս կամ թէ խրատ տալու պիտի ելլային:

«Հետեւեալ օրուրնէ Պոլսոյ սալայատակները իմ սիրական տեղուանքս եղան: Առտուանցուրնէ մինչեւ իրիկուն կը պտտէի, կը իրիկունն ալ յոգնած դադրած անկողին կ'իյնայի: Գլխուս զարկածի պէս բան մըն էի եղբւ: Դեռ ինծի պատահածը չէի կրնար կոր հասկընալ, իմ պզտիկ գանկիս մէջ չէի կըրնար կոր սեղմեցնել ատոր բացատրութիւնը: Գէշը ան եղաւ որ ատ տարիքին մէջ, ուր դեռ ուրիշները իրենց բանդունը կը մաշեցնեն գրասեղաններուն վրայ, ես ինք իր գլխուս մնացի՝ կեանքին վրայ շատ գէշ գաղափարով: Ամսէ մը ետքը, ասդին անդին խնալով, կրցի գործ մը գտնել, կեսարացի վաճառականի քով: Բայց չկըրցայ հոն մնալ, ադ մարդը իր ուշափն պէս գործածել կ'ուզէր զիս, վարժուած չէի այդ կեանքին, ձգեցի գացի: Անկէ ետքը ուրիշ տեղ գտայ, բայց տեղ մըն ալ չկրցայ մնալ: Սիրտս նեղցեր էր: Երկու երեք ամիս ետքը արդէն ելած էի այն ազգականներու տունէն, որոց վրայ չէի ուզեր բեռ ըլլալ, և հոս մօտերը պզտիկ սենեակ մը վարձած էի տան մը վերին յարկը, տանիքին տակ:

«Հինգ տարի անցած է անկից ի վեր, ու չեմ գիտեր թէ ի՞նչպէս ապրած եմ: Սոսկալի վայրկեաններ ունեցած եմ. զարմանք է որ մինչեւ հիմա չեմ մեռցուցած

ինքզինքս: Հետզհետէ ինկայ, և գէշ ինկայ: Առջի խղճահարութիւններս չ'մնացին, կամքիս հակառակ բաներ ալ ըրի, ասդինին անդինին դիմեցի, բայց ուրիշ կերպ կարելի չէր: Չ'մուրացի միեակ, թէ և անօթի մնացի: Միտքէս սակայն օր մը չ'անցուցի հօրեղբօրս դիմել. ինք քանի մը անգամ նամակ գրեց ինծի որ եթէ բողբոջականութիւնը ընդունէի, կը ներէր ինծի և նորէն քովը կ'առնէր: Պատասխան անգամ չ'ուրի: Եթէ իրեն դիմելու աստիճանին ըլլամ, կը բռնեմ ծովը կը նետեմ ինքզինքս, կը լմնայ կ'երթայ:

«Հիմակ ահա այս կերպով կ'ապրիմ, թէ որ ասոր ապրիլ կ'ըսեն: Մէկուն մէկալին դիւրերը կը գրեմ երբեմն երբեմն, ձեռքս քանի ղուրուշ կ'անցնի. հոս մօտերը ճաշարանի մըն ալ խառնեքը կը գրեմ և իրիկունէ իրիկուն երկու պնակ կերակուր կուտան ինծի: Բան մըն է կ'երթայ կոր, թող կուտամ կոր որ երթայ: Աղէկ կամ գէշ ըրած ըլլալ չեմ գիտեր, բայց խիղճս հանդարտ է:»

Ոտք ելաւ ընդոստ ու ձեռքս սեղմելով.

— Շատ խօսեցայ ու փորս անօթեցաւ, ըսաւ խնդալով: Երթամ քիչ մը բան ուտեմ: Մնաք բարով:

Ու դռնէն դուրս ելաւ, և տեսայ որ, կծու ցրտին դէմ պատասպարուելու համար վերարկուն օձիքները դարձուցած և ուտերը տնկած, դիմացի փողոցն ի վար սկսաւ քալել աճապարանօք:

Տակաւին հինգ վայրկեանի չափ մնացի Բեֆթը, կարծես գամուած այդ սեղանին առջեւ: Վերջապէս ոտք ելայ: Դուրս ելած ատենս աչքիս զարկաւ դրան ճակատը դրոշմուած արձանագրութիւնն, «Աստուած եր է» և անոր հանդիպակաց կողմը միւս վերտառութիւնն. «Ահա ինչ որ է՝ շինէ՛՛ Տէրօջը Գառնի համար է: Ի՛նչ դառն հեգնութիւն «Ահա ինչ որ է՝ շինէ՛՛ Տէրօջը Գառնի համար է: Ու տակաւին ժամ մը յետոյ, ակույններուս մէջէն կը մրմռայի բողբոջականի մը ձեռքով գրուած այդ բառերը. «Ահա ինչ որ է՝ շինէ՛՛ Տէրօջը Գառնի համար է:»

Լ. ՌԱՇԱԼԵԱՆ

ԱՐԱՐԱՏ—ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՆՈՒԹԻՒՆ

Լ Է Օ

Ա.

Լէօ՛, ահաւաստիկ օտարաշխարհեայ ծածկանուն մը մեզ նորալուր, ու երբ Ըսենք թէ Պ. Առաքել Բարախանեանցն է սքօղուած այդ ծածկանունի ներքեւ, ընթերցողն ապահովարար աւելի բան մը պիտի չհասկնայ:

Եւ արդարեւ ի՞նչ գիտնալ ի մասին երիտասարդ հեղինակի մը որու գրական բոլոր գործերն են ուղեւորական մի քանի նկարագիրներ և երեք չորս վիպակ: Սակայն երբ կը կարդանք ու կ'աւարտենք այդ վիպակները մեր սրտէն ձայն մը կ'ազդարարէ մեզ թէ անոնց հեղինակը այն աշխուագի մատենագիրներու ցեղէն է, որոց մին, կամ թերեւս առաջինը, էլլըթտիկինը կ'ըսէր թէ՝ թշուառներու տառապանքի համար իր սիրտն ա'յնքան լեցուած էր կարեկցութեամբ որ ա'լ իր անձին վըրայ մտածելու տեղ չկար հոգւոյն մէջ:

Կարեկցութիւն թշուառներու տառապանքի, դարման անոնց ցաւերու, ա'յս է ոգին Արարատեան արդի մեր գրականութեան: Պատկանեան, Սունդուկեանց, Պերճ Պաօշեանց ի վաղուց անախ, և արդ Մուրացան, Շիրվանզադէ, Լէօ և ուրիշներ, ընկերական ամէն խաւերու ախտապնդութիւնը կ'ընեն, և կը պատրաստեն հանգիստարան մը Արարատեան ու Կովկասեան Հայոց զանազան դատերու վարքի բարքի, զգացումի, գաղափարի, ցաւերու և խնդութեան:

Ի՞նչ է այդ մատենագրութեան կոչումը. պարզապէս գրական զբօսա՞նք մը որ մեզ բոստանի հաճոյք կամ վիշտ կը պատճառէ, թէ բարձր նպատակ մը. ներդրածել ընկերական կեանքի վրայ, բարեփոխել զայն, ստեղծել նոր բարքեր, ներշնչել ուրիշ գաղափարներ:

Եթէ սակաւ ինչ ուշագիւր քննենք այն պատճառներն որք ծնունդ տուած են Արարատեան այն գրականութեան որ նուիրուած է ժողովրդի կեանքին պիտի կարե-

նանք առանց վարանումի համոզուիլ թէ այդ մատենագրութիւնը մեզ համար բարոյական ոյժ է, որ հզօրապէս պիտի նրպաստէ, և արդէն իսկ սկսած է նպատակ մեր կեանքը բարեփոխելու: Քրիստոնէական ոգւոյ զարգացում, առեւտրական մատենագիրներու աղդեցութիւն, ահաւաստիկ որոց պարտական ենք այդ փափկասիրտ այլ կորովի ոգւով տոգորուած գրականութիւնը:

Ժողովրդի մը մէջ քրիստոնէական ոգւոյ զարգացումի ամէնէն պայծառ երեւոյթն է գթասէր զգացումներու բարգաւաճումը. Հայերը ամեն ատեն գթասիրտ եղած են. Հայը միշտ պատրաստ ունեցած է պատառ մը հաց աղքատին համար, դարման մը հիւանդին, սփոփանք մը վշտահարին. արիւնազանգ պատահարներն որք շատ ու շատ վարեր դառնալէր խոցած են մեր սիրտը, ստրկեցուցած են և մեզ միշտ արցունք մը ունենալ արիւնակաթ սրտերու համար: Բայց Հայոց գթասիրտութիւնը յայտնուած է ու կը յայտնուի աչքի առջեւ տեսնուած ցաւի մը հանդէպ. հոգեկան ցնցումի տպաւորութեան ներքեւ Հայը բարեք կ'ընէ նման բժշկին որ հիւանդին ցաւը մի քիչ ժամանակի համար մոռցնել տալու դեղ մը կը գործածէ, առանց հոգ ընելու թէ հիւանդութիւնը հիմնովին դարմանել լաւագոյն է:

Այլ սակայն ի՞նչ երեւոյթի ներքեւ ալ յայտնուի մեր մէջ գթութեան ոգին, այսու հանդերձ գթասիրտութիւնը այլ ևս մեզ համար կրնայ համարուիլ տոհմային ժառանգութիւն, եւ ինչպէս ամէն ժառանգական յատկութիւն, այդ զգացումն ալ իր զարգացումի աստիճաններն ունի: Եւ երբ կ'ուզենք գիտնալ թէ յորմէ՞ մըլեալ Արարատ-Կովկասեան գրականութիւնը կը տառապի ժողովրդի ցաւերու մոռաւանջութեամբ և կը խորհի այդ ցաւերը ո'չ միայն ամոքելու այլ և ջնջելու միջոցներուն վրայ պատասխանը գթասիրտութեան զարգացումն է: Շնորհիւ այդ զարգացումի պատրաստուած է սերունդ մը աւելի ընդունակ անձնագործողութեան հետեւարար աւելի նուիրուած ժողովրդի լաւագոյն կեանք պատրաստելու պարտականութեան: Եւ վիպասան ու թատրեր-

գալ, այդ նոր սերունդի առաջնորդներն, ցաւերու անդամադննութիւնը կ'ընեն եւ կը հարցնեն.

— Ի՞նչու այդքան աղջիկներ կը թողնուին կը թարշամին.

— Ի՞նչու այդքան ամուսնացեալ տաւապաղներ.

— Ի՞նչու կրօնական հինցած, անպէտ օրէնքներ կաշկաղեն ամուսնական երջանկութիւնը.

— Ի՞նչու այնքան եռանդոտ, ուշիմ պատանիներ թափառիկ կը յածին փառքները, աղքատ, գոհատ, թշուառ.

— Ի՞նչու մեր ամուսնացեալ եկեղեցականութիւնը, ուղիւն իրապէս օգտակարը, զոհ է ամուրի եկեղեցականութեան.

— Ի՞նչու շինականը կը վարակի ամուտերով զորս կը փոխանցէ հարկաւոր գիւղերու.

— Ի՞նչու վաշխոտ ունի սփերուն մէջ կը լեցնեն իրենց քրտինքի արդիւնքը գիւղացիներն.

— Ի՞նչու, ի՞նչու, ի՞նչու... որ մէկը թուենք:

Եւ վէպը, կը հետամտի այդ չարիքներու միջոցները գտնել, ինչպէս բխշկները կը հետամտին մարմնական ախտի միջոցներու: Պիտի համընթաց ինքնաւոր նշանակաւի մը: Պատասխանը հաստատական է: Երբ վիպասանը կը տառապի ընկերական ցաւերու մոտամտնութեամբ, կը փոխանցէ իր կարեկից, զայրացեալ սրտի զգացումներն հանրութեան սրտին: Կը յուզէ ժողովրդի ոգին, կը գալարէ անոր սիրտն, և երբ իր սիրունի մը կը տիրէ այդ սրտին ա՛լ ժողովուրդն իր գերին է, և գրագէտը կը վարէ զայն ուր որ հաճոյ թուի իրեն. ո՞վ որ սրտի տէրն է, տէրն է նաև մտքին, և վիպասանը՝ տէր ժողովրդի սրտին, այսինքն հանրային զգացումին, տէր ժողովրդի մտքին՝ այսինքն հանրային մտքին, իր տրամագրութեան ներքեւ ունի հանրային կարծիքն ու հանրային զգացումն. ահագին զօրութիւն որու կռիւնած, վիպասանը պարտաւորիչ կ'ընծայէ ընկերական կազմակերպութեան իր ծրագիրներն: Խնդիրը միայն ժամանակի հարց է:

Աղբաբ թափախէ քնակը վիպասանի զօրութեան

թեան չափը կ'ապացուցանէ: Կնոջ մը գըրած այդ ամերիկեան վէպն է որ այնքան հզօրապէս նպաստեց յեղաշրջել Ամերիկայի ընկերական կարգ կանոնը: Աղբաբ թափախէ քնակը կը պատկերացնէր ցաւերն ընկերական այնպիսի դասի մը որ ո՛չ արեւնական կապերով, ո՛չ զգացումներով, ո՛չ պատմական յիշատակներով կապուած էր երկրին տիրապետող տարրին հետ, եւ սակայն այդ դասը հարկադրեցաւ զոհել իր բոլոր նիւթական շահերն իրեն օտարոտի ցեղի մը օգտին, վասն զի յուզուած էր հանրային զգացումը, գրգռուած հանրային կարծիքը: Քրիստոնէական գըրթութիւնը ո՛չ ցեղ կը ճանաչէ, ո՛չ կրօնք, ո՛չ շահ:

Եւ ո՛չ ապաքէն «ի Ռուսիա վէպն է որ միայնակ կը յուզէ ազգային կեանքի բոլոր խնդիրները»: Հոն Կոկոլ, Դոլադոյ, Դուրկէնիւզով, Տասդայէվսքի իրենց վէպերով բարոյապէս տիրապետած են այդ վիթխարի երկրին. ընկերական ամէն բանորոգում՝ մերթ մահամբ, խիստ շատ անգամ ամբողջապէս վէպին պարտական է ուսու ժողովուրդը. ա՛յսպէս ճորտերու ազատագրութիւնը, ա՛յսպէս Սիպերիայի աքսորեալներու վիճակի բարւոքումը:

Ի Ռուսիա հայերը կը զարգանան ուսու մատենագրութեան հովանիին ներքեւ. անդ հայերը օտար շատ լեզու սորվելու հարկին մէջ չեն. տիրապետող կառավարութեան բարբառը կը բաւէ իրենց. ուսանելն կը կարգան և իրենց միտքը ուսու գրականութեան կազմակերպին մէջ կը ձուլուի: Եւ զի ամէն ուրեք սքանչելապէս ընդունակ ենք մերն ընել ինչ որ ուրիշ ժողովուրդներու, որոց հետ յարաբերութիւն ունինք, յատկութիւնն է կամ թերութիւնը՝ մանաւանդ թերութիւնը՝ անդ. եւս մերիները սկսած են իւրացնել ոգին ուսու գրականութեան: Արարատ-Կովկասեան մատենագիրները կը հետեւին այն ուղղութեան զոր գծած է ուսու վէպը, և ինչ որ ուսու գրականութիւնը կ'ընէ ուսու ժողովրդի համար, հայ գրագէտները կը փորձեն նոյնը ընել մեզի համար:

Մենք սնած փրանսական գրականութեամբ, գոհ ըլլա՞նք որ մեր Արարատ-

Կովկասեան մատենագիրները ռուսական գրականութեան ոգւով կը զարգանան: Առանց վարանումի պատասխաննիս հաստատական է: Մեզ կարելի չէ, գէթ առայժմ, աւելի ընդարձակ գաղափար տալ ռուս գրականութեան նկատմամբ, բայց որպէսզի հայ ընթերցողն ալ գիտնայ թէ ի՞նչ է այդ ռուսական գրականութիւնը, հարկ կը համարինք մի քանի տողով ամփոփել Ֆրանսացի մատենագրի մը Վոկիւէ դերակոմսին կարծիքներն: Այդ սքանչելի մատենագիրը գեռ նոր ընտրուեցաւ անդամ Ֆրանսայի Ակադեմիայի, ռուսական գրականութեան վրայ բրած իր ուսումնասիրութիւններուն պատճառաւ: Իր կարծիքներն առաջնակարգ կարեւորութիւն ստացած են և անհերքելի վճիռներ համարուելու իրաւունքն ունին:

Վոկիւէ այնքան դժբաղդ կը գտնէ Ֆրանսական գրականութիւնը որքան դժբաղդ Ֆրանսական աշխարհավարութիւնը: Կը կարծէ թէ ինչպէս որ Ֆրանսա ձեռքէ հանեց աշխարհի նիւթական տիրապետութիւնը, Ֆրանսական գրականութիւնն ալ իր սխալներովը կը կորսնցնէ մտաւոր տիրապետութիւնը որ իր բաժինն էր աշխարհի մէջ:

Այլ եւս ուսումնաստենչ երիտասարդութիւնը չ'գտնէր իր հոգեկան սնունդը Ֆրանսական մատենագրութեան մէջ: Տեղական գոյն, անօրինակ դէպքերու ախորժ, երեւակայութիւն, ահաւասիկ Ֆրանսական գրականութեան յատկանիշներն. իսկ ռուսական գրականութեան մէջ կը փչէ կեանքի շունչը որ ա'յնքան հրապուրիչ կ'ընծայէ ռուսական մատենագրութիւնը ընկերական ամէն ամտիճանի ուսումնասէր երիտասարդութեան:

Սովի, աւելի օրերը վերագարձած են Ֆրանսական մատենագրութեան համար: Ռուսները ճիշդ ժամանակին կը հասնին և եթէ Ֆրանսացիք տակաւին ընդունակ են մարտելու, իրենց արիւնը պիտի վերանորոգեն ու կազդուրեն ռուսական արիւնով:

«Եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամպարիչտն ո՛ւր երեւեսցի», եթէ Ֆրանսական գրականութիւնը ռուսականի բարերար ազդեցութեան կարօտ է, այլ ևս ի՞նչ ըսել մեզ համար:

Այդ ռուսական ազդեցութեամբ զարգանալ սկսած նորածիլ տաղանդներէն է և Լէօ որու առաջին վիպակներն հրատարակեց Մշ: Կը բաւականանամ այդ վիպակներէ մին, Պանդոսի, ներկայել մեր ընթերցողներուն: Կարծեմ ամէնէն պարզ և լաւագոյն միջոցն այս է թէ՛ հեղինակը ծանօթացնելու և թէ՛ մտաւոր դադափար մը տալու այն գրականութեան որու ներկայացուցիչներէն է Լէօ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՊԱՆԴՈՒՍԻ ԿԵԱՆՔԷՆ

Խոստումն. — Պատանի պանդուխտները. — Մեր Մարտիկին պատմութիւնը. — Անդիւն. . . .

Կը յիշե՞ս, Արփիար, երբ քեզ բան մը գրել խոստացայ Պանդոսի կեանքէն, գրեցի նոյն ատեն թէ կարգ չ'պիտի դրնեմ ի նմա և ոչ իսկ արուեստ: Եւ ահա այսօր մինչ վերստին կ'սկսիմ, դարձեալ նոյն խորհուրդը կը պաշարէ միտքս: Այդ ցաւոց մէջ կարգ դնել կարելի չէ. ո՛ւսկից կը ծնին անոնք և ո՛ւր կը հասնին: Միայն իրողութիւններ, ճամարտութիւններ պիտի դնեմ թղթերուն վրայ, իրենց ցո՛ւրտ մերկութեանը մէջ, իրենց արիւնոտ կողերովը ու կեղերովը. թող ատոնք խօսին մարած, ի՞նչ կ'ըսեմ, կենդանի եւ կրակոտ լեզուաւ: Կը յիշե՞ս. գրեցի միանգամայն որ անհարթ լեզուաւ անոնց թղթերէն ալ պիտի դնեմ Մշ-ի վրայ, իրեւ պատուաւած ցնցոտիներ անոր կողերուն. այո, ո՛չ միայն զայդ պիտի ընեմ, այլ և ես ինքս ալ յարգարուն գրելու անխոյթ պիտի գտնուիմ. գրչիս ծայրէն մի անգամ դուրս թռածը, գըրուածը, ժայռին վրայ նետուած փրփուրին պէս, վերստին յարգարելու չը պիտի դառնամ Պանդոսի կեանքէն մէջ. կսկծանաց վրայ պարապով դեգերելը՝ մատներդ սիրականի մը վերքերուն մէջ անխառն սրտիւ խառնելու կը նմանի. այդ արութիւնը կը պակսի յիս: Խոստումն յիշեցնելով կ'սկսիմ վերստին:

Ա՛լ տեղ չմնաց, տեղ չկայ խաներու մէջ. լցուած են իրարու վրայ ամէն կողմէ, ամեն քաղաքէ ու գիւղէ, նոր մարգիկ, նոր պատանիներ: Ո՛վ որ ուշիւ ակնարկ մը նետէ, կը տեսնէ որ նորեկ Պանդուխտներու մեծ թիւը կը կազմեն 14-16 տարեկանները խեղճուկ հագուած, ոտքերու վրայ հինցած պատուտած կօշիկ մը, որ 15-20 օր լեւ ու քար սար ու տոր կտրելով Պոլիս հասեր են: Ո՛վ կը նայի այս ողորմելիներուն. հաւատացէք որ շատք որբեր են, յոյս դրած հեռուոր ազգականի մը, կամ դրացնի մը վրայ: Կը նստին օրերով կ'սպասեն ամիսներով, պարտքով ճամբայ ելած, պարտքով շոգենաւի վարձք հատուցած, հիմա ալ պարտքով պարտալ կը նստին գեռատի պատանիներ, զրկուած զգուանքներէ, սիրելիներէ, և կենսական օգէն ալ:

Ասոնց մարերէն խրաքանչիւրն այնպէս կը հաստատայ որ իր տղան Պոլիս հասնի թէ չէ, ֆաթալ գրկելու կարող կ'ըլլայ, և իր պէտքերը կը հոգացուն: Իրա՛ւ, հազիւ թէ երկու ամիս անցեր է, թուղթ կուգայ մօրմէն. — «Տղա՛ս, փարա գրկէ այս ֆաթալ. դու գիտես որ քեզ պարտքով ու արցունքով ճամբայ հանեցի»: Այս նամակներն ամեն թղթաբերով կը թափին խաներու մէջ, թարմ տղաներ կը կարդան, կ'զգան ու կը խռովին: Օր մը, չգիտեմ երբ էր, խանի մը սենեակը կը մտնէի. նորահաս պատանի մը անկողին վրայ մէկ քով կրթնած էր ձեռքը դրած գլխին և մտախոհ: — Ի՞նչ ունիս, սիրելիս: — Հա՛, բան մը չունիմ, բսելով, ծածկեց ինձմէ ամեն բան, և իր վշտագին սիրտը, թէ ևս գժուարութիւն չունէի շատ բան մէկանց խմանալու: Մայրը թուղթ զրկած էր, հէք կինը պարտքեր ու պէտքեր դրած վաւկին առջեւ. խակ տղան ո՛չ միայն գործ չունէր, այլ և գործելու ալ կրթուած չէր տակաւին: Այսպէս ահա մոռնալու, անօրինակ տանջուելու կ'սկսի մեր հայրենակից նոր սերունդն կեանքի այն տարիքին մէջ, ուր բնութիւնը ծաղիկներ կը բանայ և ոսկի ճաճանջներ կը հիւսէ մեր գլխուն վերեւ և ոտքերու տակ: Յաջողութիւն ալ կ'ունենան. գիտէ՞ք թէ ի՞նչ է՝ այդ. — հա՛, ըսեմ. կը նետուին դժուարութեամբ վարպետի մը

քով. ալ կը տեսնես անոնք որ տասներկու ժամ բեռնաւորեալ կ'եննեն կ'իջնեն լատակներէն վեր ու վար. մէկն իր բէճին (ուս) վրայ դրած է կրախառն չաղախն, ուսն ուռած ու կարմրած է. շնիքն այրած կիրէն. ինքը խաշած ու մաշած: Ուրիշ մը կը նետեն բեռնակրի ձողերուն տակ: Ա՛խ, ևս քանինե՛ր տեսեր եմ, թարմ ու առոյգ տղաներ, հսկաներ ըլլալու խմորով շինուած, որք տաժանելի աշխատութեանց տակ սմբած ու սքլած մնացին, քանինե՛ր ճնշուեցան, ճմլուեցան ու կը ճղմուին. քանինե՛ր ալ, կրծոց տախտակները ջախջախուած, անցան դացին վազամուկէ՛ հայր, մայր, տուն տեղ աւերակ թողլով և դուռներ դոցելով: Հոս զանց կ'ընեմ յիշատակել այն մատաղ զոհերն ալ, զոր միշտ և ամեն տարի կուտանք պատերէն վար, լատակներէն վար: Գիտե՞ս ասոնց թաղումը. պատմեմ: Սեւ օրուան շահածը, կէս կամ քառորդ օրական, կը ծրարեն կը դնեն մեռելին կոտրած կուրծին վրայ, և այնպէս կ'առնեն կը տանին ի գերեզման, այդու երկու բան ապացուցանելով, — կեանք մը որ հինգ տասը դահեկանի արժէք ունի, դրամ մը, որ անիծեալ է յաւէտ: Ասոնց օրագիրը մեր թերթն է, Արեւել. շատ օրեր չանցան երբ ևս կը կարդայի ի նմա, որ Մանուկ մը Պոլսոյ կողմը՝ տունէ վար ինկած կոտրտած էր, Պետրոս մը Պէշիկ-թաշի մէջ ջախջախուած ու մեռած: Հողաչէ՛ն տերեւներ, որ ամեն եղանակի մէջ կեանքի արմատէն կը փրթին կը թափին աշխան թերթերու պէս:

Ողջ մնացողներն ի՛նչ կ'ընեն, ահա ինչ որ պէտք է գիտե՛լ այդ նորահասներու մասին: Մեր Մարտիկն ասոնց կարգէն է եւ իր պատմութիւնը մատամբ անոնցն է, երկու տարին անցաւ յորմէհետէ Պոլիս եկած է. իր տարիքն է հիմա տասնեակեց: Իր հայրը պանդխտութենէ ի տուն դարձին՝ կարնոյ լեռներուն մէջ առանց գերեզմանի կորսուած է. Թագուհի, այդ տղուն հէք մայրը, իր չորս մատաղ որբերովը քանի տարի տառապելէն ետքը, Մարտիկը ճամբայ կը հանէ տասնչորս տարեկան: Այո, Մարտիկն հիմայ ալ հոս է. հօրմէն մնացած 50 ոսկւոյ պարտք ունի վզէն կախուած, տունն ալ, որ իրեն կը

նայի, պէտք ունի, պարտք ունի, տուրք ունի, քարք ունի. ասոնց ամենուն ալ պիտի հասնի նա: Բայց Մարտիկը մեր ձեռքն հասած էր. չե՞ս խնայեր տասնեւչորս տարեկան հասակին, կը թողո՞ւս որ բեռնակրին անողորմ ձողը կտորտէ այդ մատաղ չէ՞քը. — ոչ բնականաբար: Ուստի մինչև տասնեւից տարիքը վար դրինք զինքը. մօրը թուղթերն ալ անպատասխանի թողուցինք շատ անգամ, գործելու վարժել տուինք խնամոց տակ: Օր մը երեկոյին տուն դարձայ. Մարտիկ չերեւաց, զի խան գացեր էր, այդ փոսն, որ Գանայեանց ծակ կարասին պէս անյագ կը կընէ մեր կեանքերը: Արժանապատուութեան զգացումը զինքը հոն նետեր է. աշխատիլ, ինքնութիւն ունենալ, ապրիլ և ապրեցնել իր քսակովն ու քրտինքովը: Այս կիրակի ալ այցելութեան եկել էր Մարտիկը. այտերուն կարմրութիւնը տակաւ մարելու սկսած է, ալոտտած, վրան գլուխը պատուտած, կօշիկները ծակ ծակ: Թէեւ մեզ տան տղու պէս և մեր փողոցի մարդոց ամենուն ալ սիրելի էր, բայց այս անգամ ոչ ոք նայեցաւ իր վրայ, զի ինքն ալ իր վրայ չէր նայած: Ի՞նչ շահած էր հապա այսչափ կորուստներու փոխարէն. լսեցէք լաւ, և անմոռաց կապեցէք յուշի. — 75 դահեկան կ() օրուան մէջ, կէսն ապառիկ, և սա յոյսը թէ քանի մը օրէն եթէ գործ ունենայ, մէկ ոսկւոյ կը հասցնէ այդ գումարն և մօրը կը զրկէ: Ո՛րչափ ալ իր անձին գրկանք ըրած է խեղճն մինչեւ որ այդչափ յաջողած է. — գուցէ շատերուն ծխախոտի սպառած դրամն ալ իր ստամոքսին ծախսած չէ: Մարտիկի կեանքն ամենուն կեանքն է, և մանաւանդ թէ անոնց մէջ բարերատրիկն եղաւ: Վարպետի վախը չկրեց, բեռնակրի ձողէն ազատեցաւ: Վէպ չէ գրածս, Արփիար. եթէ ուզես, աւուր մէկը կը զրկեմ զնա քեզ թղթի կտորով մը, հարցուր և իր պատմութեանը տեղեկացիր նոյն խակ իր բերնէն, իր վրան ալ նայէ, երեսներն ալ տես, աչքերն ալ գննէ, վրան գլուխը գլթոտ նայուածքէ անցո՛ւր, քսակն ալ քննէ, և հուսկ ապա հաշուէ թէ ի՞նչ կրնար ըլլալ այդ խմորով շինուած տղան, և ի՞նչ պիտի ըլլայ այդ տաժանելի կեանքէն, որուն դատապարտուած է: Հաշի-

ւէն դուրս կը նետեմ մօրը հողին ջրին, և իր հարազատներու կարօտը:

Ասո՛նք հոս, հապա անդի՛ն: Գարնան առաջին օրերը, արագիւնն ու ծիծառը հազիւ թէ ոտք դրած մեր սարերուն վերեւ, 3 000 երիտասարդ միայն Տարօնոյ գիւղերէն ճամբայ ելած են գաղտ, առանց հրաժեշտի ողջունի ծնողաց ու ընտանեաց: Այս վերջին սիրտանքէ զրկուելու բո՛ւն պատճառն եղած է անցագրի սակասը, այսինքն տասներեք դահեկանի: Ասոնք քալելով, ծուռումուռ ճամբայներով մինչև Տրապիզոն կը հասնին թէեւ, բայց նաւապետներն յանձն չեն առնուր այդ անպէտ բեռներն իրենց նաւերու տախտակաշարին վրայ նետելու:

Ա՛լ այնուհետեւ նոր տեսարան մը կը սկսի. ո՛ւր դարձան, ո՛ւր գացին, մարդ չը գիտեր. ոյսպիսի կորուստներ ալ անպակաս են ամէն տարի. կան տղաքներ, որք չգիտեն այսօր թէ իրենց հայրն ի՞նչ և ո՛ւր վախճան է ունեցած, կան ծնողք ալ որ նոյնպէս անգէտ մնացած են յաւէտ իրենց որդւոց ճակատագրին: Ահա մեր յոյսերը:

ՀՐԱՆԴ

30 Օգոստոս 1889

Արտօնատէր
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ